ԱՄԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Բ. **1870** ՅՈՒՆԻՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՃԱՌ

Ներբողենք՝ պատմութեամբ՝ խորհրդական էմատոն յարմարեալ Հոլակոսոր և Մենդի մասոն վարդապետին վարդանայ՝ յերկոս երանելոյ Պարոնն Գրիգորիոս Լուսաւորչի Հայոց աշխարհի։

Օրհնեալ Տէր Աստուած Հարցն մերոց, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա ի Տաճարի իւրում և ի վերայ հաստատութեան Սթոռոյ իւրոյ։ Այն՝ որ ի կանուխ գիտութեան իւրում ծանուցեալ զՀարսն մեր յառաջագոյն հրաւիրեաց և ի բեղմնաւոր բարի աւուրս կոչեաց ի ձեռն շնորհաց իւրոց՝ զորս արդարացոյց կենսաբեր ջրովն ի վերայ քան զերկինս, և որդեգրութեան պատուով մեծարեալ փառաւոր արար։ Քանզի ոչ յարևելից և ոչ յարևմտից և ոչ յանապատէ լերանց եղև մեզ այցելութիւն, այլ Այն՝ որ ստեղծ զմեզ, երևեցաւ մեզ արեգակն ի բարձանց, և ծագեաց լոյս՝ որոց նստէաք ի խաւարի և ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան և փրկութեան. զատաւորն ամենայն մնեղեաց ամենայաղթ դատաստանաւն յայտնեալ. քանզի ի սկզբանցն և յաւիտեանցն Արարիչ՝ ի լման ժամանակաց մանուկ եղեալ մատաղ յապառաժ, և ձգեաց զձեռն իւր ի յերկիր, տապալեաց զլերինս ի հիմանէ՝ զկպարտութիւն բանսարկուին, որ ապառաժ գործեաց զբանաւոր երկիրս պարարտ, և արկ զմատունս արուեստի իւրոյ յորջս օձից և ի բոյնս կարճաց և ի վարանս սողնոց՝ աղուէսուց. և համբարեաց այսինքն՝ ի հոգիս մարդկան, ուր բունեալ էին ապականիչ զօրութիւնքն հոգնատեսակք վեսասուք բաժանեալ՝ զորս զամենեսեան փոխարկեալ, և բուրաստանս տնկեաց յապառաժս և ի բնակութիւնս գաղանաց. ինքն իսկ բնակեցաւ Հարքն իւրով և Հոգւով սրբով. և զի անհնարինքն ի մարդկանէ հնարաւորք են յԱստուծոյ. կթեաց ի մորենոյ՝ խաղող, և Եհան թուղ ի տատասկէ այգւոյն Սողոմայ և տնկոյն Գոմորայ. և փոխեաց բարունակ բարիս կոխեաց զյատակս անդնդոց աղբիւրացոյց և

զվէմն արտաքարնաց յօրս, որոյոց կոչեաց յա-
նարմատ փայտէ պրովքն հանդերձ. զի մի՛ տաղ-
տուէն խօսեցուք, զամենայն ինչ՝ զոր արար Հնոյն
Իսրայէլի առ Փարաւօն արևմտից, զնոցնս կրթեաց
Նորոյս Իսրայէլի առ Հիւսիսով յարևելից։ Անդ
տանն Սէմայ, աստ տանս Յաբէթի. որ և ընդ Սէ-
մայ էառ օրհնութիւն, համարձակութիւն և տէ-
րութիւն ի վերայ Քանանու։ Ընդ աղդին Յակոբ-
բայ՝ որում հրամայեցաւ ջնջել կուապաշտից, և
աստ որդւոցն Հայկայ՝ որ ոչ պաշտեաց ընդ եօ-
թանասուն և մի նահապետն երկրի զպատկերն
Բէլայ. այլ խրախուսեալ յԱստուած, սատակեաց
զնոցն ինքն զկենդանին՝ զառաջնորդն պատկերա-
պաշտութեան։ Անդ զդալի և տեսանելի՝ զի օգ-
նեսցէ տկար հաւատոց Նոյա, և աստ սակաւ ինչ
զդալի՝ որ եղև հրաշքն առ Տրդատէս և յոլով
մասն իմանալի. զի միդանն հարման զաւազանին
հայրապար խրատուն սիրալի և սիրալի բաւական
եղև որդւոցն ճանաչել զՀայրն բարի։ Եւ Նոյա ի
ձեռն Մոլսէսի, և Ահարոնի, և Յեսուայ. և մերս՝
ի ձեռն Գրիգորի, Արիստակէսի և Վրդանէսի,
զուարթալոյս Նորոյն հարաղատաց. որք էին և սո-
քա յարմատոյն Արրահամու՝ որդիք պարարտու-
թեան, որպէս և զրեալ է, թէ՝ "երկու դաւազանք
որդիք պարարտութեան հաստատ պղտոյն Արրա-
համու, և ի ծաղկանց և ի պտղոց Նոյա լցին
տիեզերքք"։ Քանզի Հայրն հաստատեաց առաջի Ա-
ստուծոյ մեծն Արրահամ ի ծերութեան անդ մանկ-
եցաւ ի զորութենէ Աստուծոյ, և ծնանէր ի
Քետուրայ որդիս վեց, զԵմրան և զԷքբաղ, զՄո-
դան և զՄատիման, զԷսբակ և զՍոմիրիկ. և սոյա-
նեալ Եմրանայ զԷքբաղ և զՄատիման, և զահի
հարեալ Արրահամու՝ զոյգ և զԻսահակ սպանցէ
զկնի մահու Նորա, տայ նմա և եղբարսն ինչս՝ և
արձակէ յարևելս. յորոց շինեցաւ Բահլ քաղաք
յանուն որդւոյ Եմրանայ. յորմէ և կոչեցաւ աղդն
Պահլաւ. ուստի զօրացաւ մեծն Արշակ, որ Թա-
գաւորեցոյց ի վերայ Հայոց զԱղաթարշակ եղբայր
իւր՝ տալով նմա ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն
Կասպից դաւազան մի հատեալ յօրհնութեան
անդաստանէն արմատացեալ ի Հայկեան տանս
Թորդոմայ. և ի լառնալ Թադաւորին տիեզերա-
սաստ ի յաղդէն Եմրանայ ի Ս. Տահրայ ոստն ի Սա-
տանայական Արտաշէս յԱրտաւանայ առնալ, ի
նախանձախնդիր լինել Խոսրովու՝ որդւոյ Վաղար-
շու Արշակունւոյ, Եւ Խոսրով տասն ամ աւար
էառ զերկիրն Պարսից. և փախուցեալ Արտաշէսի
ի Հնդիկս, մինչև դայ Անակ կնաւն Խոսրով Ոդո-
հնաւ և որդւով իւրով Սուրէնաւ. և ի ճանա-
պարհին առ շիրմին Թադէոսի ասեն տրնել Գրիգորի.
և ի սպանանել հօր նորա զԽոսրով՝ ենդութեամբ
և վասն իրայ կորնչել ամենայն ընտանեօքն . . *
և եղև ծնանիլ Գրիգորի ի շիրմամանն, որոյ մանկ-
կակալ լեալ Սօփի Կեսարացի քրոջն Եւթաղեայ՝
կինն Բունդարայ, որ եկեալ է զկնի Անակայ և գնա-
ցեալ մինչև ցԿեսարիայ. և ի սոյն ժամանակի
դարձաւ կնաւ այսրէն, զի ի Պարս երթիցէ իւրա-
կանն գաւառ. որոյ զհետ եկեալ Եւթաղի՝ հասան-
է նմա ի Վաղարշապատ քաղաքի։ Ի ժամու
ծննդեան Գրիգորի և համբուրեալ զիլեսայն իւր Բուն-
դար Պարսիկ, և առեալ զմանուկն Գրիգոր դառ-
նայ ի Կեսարիայ, և Քրիստոսի ընծայեն զնա աւա-
զանաւն. և հասեալ ի չափ վարժի Յոյն և Ասորի
դպրութեամբ՝ և փիլիսայեալ ի Կեսարիայ ումեմն
հաւատացեալ ի դուստր Նորա Մարիամ կոչե-
ցեալ. յորմէ ստանայ զերկուս զաւակս, զԱրիս-
տակէս և զՎրդանէս։ Եւ ապա յԱստուծոյ տուեալ
զկեանս իւրեանց, մեկնեցան ի միմեանց, Մարիամ
գնացեալ ի կանանց Վանս, և Գրիգոր տեղեկա-
ցեալ վասն անձին, թէ ոմ և յորոց, գնայ առ
Տրդատ. զի ի ջնջելն Արտաշէսի զյիշատակս Խոս-
րովու, Արտաւազդ ոմն Մանդակունի փախուցեալ
էր առ Յոյնս, և սնուցանէր զնա առ իշխանի ու-
մեմն Լիկիանէս կոչեցեալ. առ նա երթեալ Գրի-
գորիոս և ծառայէր նմա, թեթևացուցանել կամ-
ելով զպարտսն հայրենի։ Մինչև եկն Թադաւորն
Գրիգոր՝ Հրչէ անուն, որ էր քեռորդի սրբոյն
Յակոբայ Մծբնայ Հայրապետի, որ և նա որդի
է հօրաքեռ սրբոյն Գրիգորի՝ Խոսրովու Հոյն։ Զայս
Հրաչէն ըմբռնեալ Տրդատայ ածէ առ Գիսղեսարիա-
նոս. և վասն այնր երախտեաց պսակեալ ի նմա-
նէ՝ դայ ի Հայս հանդերձ Գրիգորիւ, և տիրէ
Հայրենեաց իւրոց։

(Շարունակելի)

(*) Յօրին. պակասէին աստ բառք ինչ, եւ տեղին Քաղեալ էր պարապ։